

Դ-24

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ԿԱՄՈՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.-ԻՆ

Է.00.02. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2000

Տե՛սք՝ որ և Զույգյալներն լավագույնը
Զույգյալներն լավագույնը

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ռ.Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Վ.Ա. Բայրուրոյան

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Հ.Ս. Կորխմազյան


Առաջատար կազմակերպություն՝ Խ. Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2000թ. դեկտեմբերի 15-ին ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող պատմության
բնագավառի 006 Մասնագիտական Խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյանի պող., 24գ.)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում

Մեղմագիրն առաքված է 2000թ. նոյեմբերի 13-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար



Ռ.Ա. Սաֆրաստյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի Հանրապետության ստեղծման, նրա պետական և քաղաքական
հիմքերի և ինստիտուտների կայացման ժամանակաշրջանում (1920-1930-ական
թթ.) քաղաքական համակարգի և քաղաքական գործընթացների
ուսումնասիրությունը ունի արդիական և կարևոր գիտական, քաղաքական ու
գործնական նշանակություն:

Թուրքիայի 1920-1930-ական թթ. քաղաքական համակարգը մեծ
ազդեցություն է գործել երկրի հետագա պատմական զարգացման, նրա
քաղաքական և զինվորական վերնախավի, ինչպես նաև լայն զանգվածների
քաղաքական վարքագծի, գաղափարների և գիտակցության վրա: Այս առումով
կողմնորոշիչ դեր կարող է կատարել Հանրապետության հիմնական պետական
ինստիտուտների քաղաքական դերի և նշանակության, կուսակցությունների
գործունեության և սկզբունքների, պետության և իշխող Հանրապետական-
Ժողովրդական կուսակցության փոխհարաբերությունների, թուրքական բանակի,
որպես Հանրապետության առանցքային պետական և քաղաքական ինստիտուտի,
գործունի, քեմալիզմի գաղափարախոսության, երկրի քաղաքական առաջնորդների
դերակատարման և քաղաքական արդիականացման ուսումնասիրությունը:

1920-1930-ական թթ. Թուրքիայում քաղաքական համակարգի առանցքը,
արարիչ և շարժիչ ուժը համդիսացող քեմալիզմի պատմական փուլն այսօր էլ չի
կարելի ավարտված համարել, թեև, իհարկե, նրա հիմնական տարրերն ու
սկզբունքներն արդեն ենթարկվել են էական փոփոխությունների կամ դարձել
Թուրքիայի քաղաքական ուժերի և մտավորականության կողմից բանավեճի
առարկա: Բացի այդ, մեզանում Թուրքիայի քաղաքական համակարգի և
զարգացման հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է նաև ներկա
ժամանակաշրջանում նորաստեղծ ազգային պետությունների կայացման և դեպի
արդիական հասարակարգ անցման գործընթացներով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է՝ ելնելով 1920-1930-ական թթ.
Թուրքիայի քաղաքական համակարգի առանձնահատկությունների հետազոտման
և նրա ամբողջական բնութագրման նպատակից, որին հասնելու համար հեղինակի
առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- 1920-1930-ն թթ. Թուրքիայի քաղաքական պատմության վերաբերյալ գոյություն ունեցող նյութերի և աղբյուրների վերլուծության հիման վրա ներկայացնել ժամանակակից թուրքական պետության կայացման շրջանում քաղաքական համակարգը՝ ներառելով նրա գաղափարախոսական հիմքերը, քաղաքական ուժերի և գործոնների հարաբերությունները և դերը, քաղաքական արդիականացման առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնասիրել այն ուղիներն ու եղանակները, որոնց միջոցով Թուրքիան լուծում էր իր առջև ծառայած պրոբլեմները,
- լուսաբանել Թուրքիայի քաղաքական համակարգի զարգացման առանձին փուլերն ու ժառանգականությունը,
- ուսումնասիրել քաղաքական համակարգում Թուրքիայի Հանրապետության գլխավոր պետական կառույցների դերն ու նշանակությունը, քաղաքական կուսակցությունների ձևավորման ու փոխհարաբերությունների գործընթացը, ցույց տալ կուսակցական համակարգի և բանակի դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում,
- քննարկել տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի Հանրապետության քաղաքական ղեկավարության (լիդերության) առանձնահատկությունները, քաղաքական համակարգում առաջնորդների և քաղաքական ընտրանու ղեկավարությունը, կշիռը և փոխհարաբերությունները,
- լուսաբանել երկրում քաղաքական արդիականացման ընթացքը, ազդեցությունը և արդյունքները
- վերոհիշյալ ժամանակաշրջանում թուրքական քաղաքական համակարգի տարրերի և առանձնահատկությունների վերլուծության հիման վրա բացահայտել երկրի հասարակական-քաղաքական զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի հանդիսացել հատուկ ուսումնասիրության առարկա: Չնայած, որ Թուրքիայի Հանրապետության կազմավորման, նրա քաղաքական և հասարակական զարգացման խնդիրները, (ինչպես, օրինակ, սահմանադրական կարգերի, քաղաքական կուսակցությունների, իսլամի և արևմտականացման հարաբերության հարցերը) քննարկվել են որոշ հայ և խորհրդային հեղինակների կողմից, սակայն քաղաքական համակարգը որպես այդպիսին չի ներկայացվել առանձին

աշխատանքով: Խորհրդային արևելագիտության և քաղաքագիտության մեջ Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքականության ոլորտի մասնագետները սովորաբար առաջնահերթությունը տալիս էին տնտեսական զարգացման, բյուրոկրատիայի, դասակարգային պայքարի և դասակարգային կառուցվածքի խնդիրներին, ինչը թելադրվում էր խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական կաղապարով: Թուրքական և արևմտյան պատմագրության և քաղաքագիտության մեջ ուշադրությունը հիմնականում սևեղված է Թուրքիայի քաղաքական պատմության և առանձին քաղաքական պրոբլեմների ուսումնասիրության վրա, այլ ոչ թե իր ամբողջության մեջ վերցված քաղաքական համակարգի ուսումնասիրությանը:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ներկա աշխատությունը, որպես այդպիսին, իր բովանդակությամբ, հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանիորեն վերլուծության է ենթարկվում Թուրքիայի Հանրապետության ձևավորման ժամանակաշրջանում քաղաքական համակարգը, Թուրքիայի պետական շինարարության և քաղաքական կայացման ընթացքը, ինչպես նաև համադրվում և ճշտվում են արդեն գոյություն ունեցող տեսակետները քեմալական ժամանակաշրջանի հանգուցային որոշ պահերի վերաբերյալ: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում նորովի մեկնաբանել քեմալական Թուրքիայի քաղաքական ինստիտուտների ձևավորման և զարգացման ընթացքը, այդ զարգացման տարբեր փուլերն, օրինաչափությունները և մեխանիզմը:

Ատենախոսության մեջ հանգամանալիորեն ուսումնասիրվում են Թուրքիայում 1920-1930-ական թթ.-ին Հանրապետական-Ժողովրդական կուսակցության դերը քաղաքական համակարգում և նրա փոխհարաբերությունները պետության հետ, որոնք ձեռք էին բերել «կուսակցապետության» կարգավիճակ. քննության է առնվում բանակի գործոնը տվյալ ժամանակաշրջանում, երբ փաստորեն հիմք դրվեց թուրքական բանակի ներկա դերի և կարգավիճակի համար, մինչև Թուրքիայի նորագույն պատմության մեջ բանակի գործոնի ուսումնասիրությունները կենտրոնացված են հիմնականում 1960-ական թթ.-ից սկսած բանակի կողմից իրականացվող պետության նկատմամբ վերահսկողության քաղաքականության վրա: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում Թուրքիայի Հանրապետության առաջին քաղաքական ղեկավարների դերին, ընդհանրապես՝ թուրքական քաղաքական ղեկավարման խնդրին, որը մինչ այդ թե՛ խորհրդային և

ռուսական, թե՛ հայ մասնագիտական գրականության մեջ չի դիտարկվել որպես առանձին երևույթ: Լուսաբանվում են նաև քաղաքական արդիականացման պրոբլեմները, որոնք լայն մեկնաբանությունների են արժանացել բուրբակյան և արևմտյան պատմագրության և քաղաքագիտության կողմից՝ ունենալով, սակայն, որոշակի բացթողումներ, որոնք սույն աշխատությունը փորձ է անում լրացնել:

Գիտական նորույթ է ստեղծախոսության մեջ կատարվող փորձը դիտարկել քենալական քաղաքական համակարգը ամբողջատիրության, ավտորիտարիզմի և ժողովրդավարության քաղաքական համակարգերի մասին տեսությունների հիմքի վրա:

Ուսումնասիրության նորույթը կայանում է նաև նրանում, որ այս աշխատությունը կատարվել է պատմագիտության և քաղաքագիտության սկզբունքների և մեթոդների համադրման միջոցով՝ հանդես գալով այս երկու հասարակական գիտությունների սահմանագծին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՍՏԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՍԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ստեղծախոսությունը հիմնականում ընդգրկում է 1920-1930-ական թվականների ժամանակահատվածը, որի ընտրությունը պայմանավորված է եղել մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմ թուրքական ազգային պետության ձևավորմամբ և նրա հիմքերի հաստատմամբ, ինչպես նաև Հանրապետության հիմնադիր Քենալ Աթաթյուրքի պետական և քաղաքական գործունեությամբ և պետական շինարարության գործընթացի վրա մեծ ազդեցությամբ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և պատմագիտական գրականության հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են թուրք, ամերիկյան, եվրոպական և խորհրդային հետազոտողների հարցին անդրադարձող արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը և պարբերականները:

Ատեղծախոսության մեջ օգտագործվել են նյութեր, որոնք պահվում են Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական արխիվում: Դրանք Հայկական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի N 114 ֆոնդին պատկանող գրագրությունն ու թղթակցություններն են, որոնք վերաբերվում են քենալական Թուրքիայի պատմության սկզբնական փուլերին:

Աշխատանքի համար որպես փաստաթղթային սկզբնաղբյուր են ծառայել թուրքերեն, ռուսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով տպագրված վավերագրեր և փաստաթղթեր՝ «Աթաթյուրքի ելույթները ԹՄԱԺ-ի բաց և գաղտնի նիստերում»՝ Քյազըմ Օզթյուրքի խմբագրությամբ, «Աթաթյուրքի ճառերի և ելույթների» թուրքերեն և ռուսերեն հրատարակությունները, որտեղ ներգրավված են նաև լրագրողներին տրված Աթաթյուրքի հարցազրույցները, ինչպես նաև «Իթթիհադ վե Թեռաքքը» («Միություն և Առաջադիմություն») կուսակցության, Հանրապետական-Ժողովրդական կուսակցության, Առաջադիմական-Հանրապետական և Լիբերալ-Հանրապետական կուսակցությունների նյութերը¹: Նախագահական արխիվից չհրատարակված աղբյուրներ են բերվում նաև Շ. Ալդեմիրի «Միակ Մարդը», Լորդ Կինրոսի «Աթաթյուրք» գրքում, «Թարիի վե թոփում» և «Բեյլետեն» պարբերականներում²: Մույն սկզբնաղբյուրները կազմում են այսպես կոչված «ուղղահավատ քենալիզմի» հիմքը: Ք. Աթաթյուրքի հայտնի «Ճառը», օրինակ, որոշակի միտումնավորություն է պարունակում՝ ուղղված լինելով նրա նախկին զինակիցների վարկաբեկմանը: Օգտագործված սկզբնաղբյուրների մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն թուրքական պետական ու քաղաքական գործիչների ելույթները, հարցազրույցները և հիշողությունները, մասնավորապես, Քենալ Աթաթյուրքի զինակիցների և ապա նաև ընդդիմախոսների՝ Ք. Կարաբեքիրի, Ա. Ֆ. Ջեբեսոյի, Ռ. Օրբայի³ հուշերում պաշտոնական պատմագրությունից առանձնապես տարբերվող տեսակետներ 1920-1930-ական թթ. պատմական փաստերի վերաբերյալ չեն հանդիպում, սակայն դրանք այս կամ այն կերպով թույլ են տալիս պարզել քենալական շարժման, հետագայում նաև Հանրապետության քաղաքական կյանքում էական դեր կատարած գործիչների հայացքները: Հարկ ենք

¹ Atatürk'ten Düşünceler. Ankara, 1964; Atatürk'ün Söylev ve Demeçleri, c. I-III, Ankara, 1961; Kemal Atatürk. Söylev (Nutuk), c. I-3, Ankara, 1964; Atatürk'ün TBMM oturumlarındaki açık ve gizli konuşmaları. C. I-2 Ankara, 1990; Ататюрк К. Избранные речи и выступления. Москва, 1966; Мустафа Кемаль. Путь новой Турции. т. 1-4, Москва 1929-1934; Tunaya T.Z. Türkiye'de Siyasî Partiler. 1859-1952. İstanbul, 1952; Устав турецкой Народно-Республиканской партии. "Революционный Восток", Москва, N 4-5, 1928, сс. 348-358

² Aydemir Ş..S. Tek Adam. Mustafa Kemal. c. 2-3, İstanbul, 1975-1976; Kinross, Lord. Atatürk. The Rebirth of a Nation. London, 1965; Tekeli İ., İlkin Ş. Kurtuluş savaşı'nda Talât Paşa ile Mustafa Kemal'in mektuplaşmaları. "Belleten", c. XLIV, N 174, Nisan 1980. ss.301-346; E.J.Zürcher. 1924' teki Çok Partili Demokrasi. - "Tarih ve toplum", N 49, Ocak 1988, ss. 16-19

³ Cebesoy A.F. Mustafa Kemal - Millî Lider. "Belleten", c. XX, N 77, Ekim 1956, ss. 48-64; Cebesoy A.F. Millî Mücadele Hatıraları. Ankara, 1957; Kandemir F. Kâzım Karabekir'in yakılan hatıraları meselesinin içyüzü. İstanbul, 1964; Orbay R. Hatıraları. "Yakın Tarihimiz", "Milliyet", 7-27.10, 1983

գտնում առանձնացնել նաև Թուրքիայի առաջին նախագահի շրջապատին պատկանող գործիչների և նրա ժամանակակիցների՝ Զ. Ալիի, Յ. Զ. Կարաօսմանօղլույի, Ֆ. Ռ. Աթայի, Հ. Է. Արքվարի, Ա. Աղաօղլույի, Ա.Է. Յալմանի հուշերը⁴:

Վերևում արդեն նշվել է, որ ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ խորհրդային արևելագիտության մեջ հատուկ աշխատություններ գոյություն չունեն, սակայն օգտակար եղան այն խորհրդային թուրքագետների, արևելագետների, պատմաբանների աշխատությունները, որոնք այս կամ այն տեսանկյունից դիտարկում են պրոբլեմի առանձին կողմերը: Այս շարքում կարելի է նշել Գ. Աստախովի, Վ. Գուրկո-Կրյաժնի, Մ. Պավլովիչի, Իրանդուսի, Վ.Գորդևսկու, Ա.Միլերի, Ա.Նովիչևի, Ա. Շամսուդդինովի, Է. Հասանովայի, Բ. Պոլցիսկերիայի, Ֆ.Շաբանովի, Մ.Հասրաբյանի ակնարկները և հետազոտությունները⁵, սակայն նրանց ոչ բոլոր եզրակացությունների և դրույթների հետ կարելի է համաձայնվել: Միաժամանակ խորհրդային պատմագիտության մեջ Թուրքիայի Հանրապետության կայացման շրջանի հետ կապված որոշ քաղաքական հիմնախնդիրներ և կողմեր կամ ընդհանրապես լուսաբանված չեն, կամ էլ դրանց մեկնաբանությունը հաճախ բավարար չէ՝ կատարվելով մարքսիստ-լենինյան կոնցեպցիաների հիման վրա, համաձայն որոնց, քաղաքական համակարգը դիտվում էր որպես տնտեսական գործընթացների արտահայտություն և դասակարգերի միջև հարաբերությունների ոլորտ:

Պետք է նշել, որ, չնայած խորհրդային ժամանակաշրջանի զաղափարախնասական սահմանափակումներին, հայ արևելագիտությունը

⁴ Ağaoglu A. Serbest Firka Hatıraları. İstanbul, 1968; Ali K. Kiliç Ali hatırlarını anlatıyor. İstanbul, 1955; Atay F.R. Çankaya: Atatürk Devri Hatıraları. c. 2, İstanbul, 1958; Adivar H.E. Turkey Faces West. New-York, 1973; Yalman A.E. Turkey in My Time. Oclahoma, 1967; Караосманоглу Я.К. Дипломат поневоле. Москва, 1978

⁵ Г.Астахов. От султаната к демократической Турции. Очерки из истории кемализма. Москва-Ленинград, 1926; Ирандуст. Движущие силы кемалистской революции. Москва-Ленинград, 1928; Кражин В. Политические группировки в Турции. "Новый Восток", кн. 3, 1925, сс. 35-66; Павлович М., Гурко-Кражин В., Раскольников Ф. Турция в борьбе за независимость. Москва, 1925; Гасанова Э. Об идеологических основах кемализма и их современном толковании в Турции. "Народы Азии и Африки", 1968, N 3, сс. 25-33; Гордлевский В. Избранные сочинения, т. 3, Москва, 1962; Миллер А. Очерки новейшей истории Турции. Москва-Ленинград, 1948; Миллер А. Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. Москва, 1983; Новичев А. Турция. Краткая история. Москва, 1966; Поцхверия Б. Мустафа Кемаль Ататюрк. "Народы Азии и Африки", 1963, N 12, сс. 18-27; Шабанов Ф. О кемалистских принципах формирования национальной государственности в Турции. - "Турция: история, экономика", Москва, 1978, сс. 32-43; Шамсуддинов А. Турецкая Республика. Москва, 1962; Гасратян М. Курды Турции в новейшее время. Ереван, 1990;

կայողացել է տալ քեմալական Թուրքիայի ավելի օբյեկտիվ և ինքնուրույն գնահատականը, մասնավորապես, նրա կողմից վարած ազգային քաղաքականության հարցում, ինչի օրինակ կարող են լինել հայ թուրքագետներ Ռ.Սահակյանի, Բ.Կոնդակչյանի, Ե. Սարգսյանի, Հ. Ինճիկյանի արժեքավոր աշխատությունները⁶: Բացի այդ, քեմալական շարժման և Թուրքիայի Հանրապետության ստեղծման ժամանակաշրջանին անդրադարձել են և իրենց գնահատականներն տվել որոշ հայ պատմաբաններ՝ Ջ.Կիրակոսյանը, Հ. Միմոնյանը և այլն⁷:

Թուրքիայի Հանրապետության ստեղծման ժամանակաշրջանին և Զ.Աթաբյուրքի կյանքին ու գործունեությանը մեծ տեղ և ուշադրություն է հատկացվում թուրքական պատմագրության մեջ: Թուրքիայի Հանրապետության քաղաքական զարգացման առաջին տարիների վերաբերյալ թուրքական պատմագրության մեջ ատկա կարծիքների, գնահատականների և դատողությունների հիմքում հաճախ դրվում են պաշտոնական տեսակետները, որոնք մեծ մասամբ ջատագովական բնույթ են կրում: Թուրքիայի պաշտոնական պատմության - «Թարիհի», դասագրքերի, հուշերի հեղինակները հաճախ իդեալականացնում են Զեմալ Աթաբյուրքի և այլ թուրքական ղեկավարների անձն ու գործունեությունը: Այդ շարքի հեղինակներին են պատկանում, օրինակ, Է. Քարալը, Աֆեթինյանը, Յ. Հ. Բայուրը, Մ. Սոնյելը⁸:

Թուրքիայի Հանրապետության քաղաքական կայացման և զարգացման այս կամ այն ասպեկտին, մասնավորապես, Հանրապետության և նրա ինստիտուտների ստեղծման կամ քաղաքական կուսակցությունների խնդիրներին անդրադարձել են

⁶ Кондакчян Р. Внутренняя политика Турции в годы второй мировой войны. Ереван, 1978; Кондакчян Р. Турция: внутренняя политика и ислам. Ереван, 1983; Илджикян О. Буржуазия Османской империи. Ереван, 1977; Саакян Р. Франко-турецкие отношения и Куликуя в 1918-1923 гг. Ереван, 1986; Սահակյան Ռ. Կայսրությունից դեպի ազգային պետություն. - Ինքնություն, Երևան, 1995, էջ 134-139; Սահակյան Ռ. Մուստաֆա Զեմալի մի հարցազրույցի աղիթով. - «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 3, էջ 237-238; Սարգսյան Ե. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում. Երևան, 1964

⁷ Киракосян Дж. Младотурки перед судом истории. Ереван, 1989; Միմոնյան Հ. Թուրք ազգային քաղաքականության զաղափարաբանությունը և քաղաքականությունը. Երևան, 1986.
⁸ Afetinan. Atatürk ve Demokrasi. "Belleten", c. LII, N 204, Kasım 1988, ss. 825-832; Bayur Y.H. Atatürk'ün seziş gücü. "Belleten", c.LII, N 204, Kasım 1988, ss. 975-984; Karal E.Z. Atatürk ve Devrim. Ankara, 1980; Karal E.Z. Türkiye Cumhuriyeti Tarihi. İstanbul, 1944; Sonyel S. Büyük General, Asil Düşman ve Cömert Dost Gazi Mustafa Kemal. "Belleten", c.XLIII, N 171, Temmuz 1979, ss. 619-634;

Շ. Թուրանը, Թ.Թունայան, Դ. Ավջրողուն, Մ. Թունչայը, Հ. Ինալթըքը⁹: Արևմուտքում բնակվող ազգությամբ թուրք պատմաբաններ և հասարակագետներ Ն. Բերքեսի, Բ.Թուփրաքի, Օ. Սեհմեթի, Չ. Քեյլերի, Զ. Զարպատի, ինչպես նաև Մ. Հեփերի, Օ. Օքյարի աշխատություններում¹⁰ հետազոտվում են Թուրքիայի հասարակական-քաղաքական գործընթացների և արդիականացման պատճառները, ընդ որում, այդ հեղինակները, թեև տուրք տալով թուրքական պաշտոնական պատմական կոնցեպցիաներին, փորձել են տալ ավելի օբյեկտիվ և քննադատական գնահատականներ Թուրքիայի պատմության քեմալական ժամանակաշրջանին:

Անդրադառնալով արևմտյան հետազոտողների ուսումնասիրություններին՝ հարկ է նշել, որ այնտեղ 1920-1930-ական թթ. քեմալական Թուրքիան ավանդաբար դիտվում է որպես ժողովրդավարության մախապատրաստական և անհրաժեշտ անցումային փուլ, թեև վերջին տարիների հետազոտություններն արդեն կենտրոնանում են քեմալիզմի ավտորիտար բնույթի վրա՝ նկատելով նույնիսկ ամբողջատիրական միտումներ: Արևմտյան հեղինակների կողմից շատ տեղ է հատկացվում քեմալիզմը որպես առաջադիմական քաղաքականություն և գաղափարախոսություն բնութագրելուն և անտեսվում են դրա որոշակի բացասական կողմերը:

Այսպես, քեմալական Թուրքիայում քաղաքական զարգացման և քաղաքական կուսակցությունների խնդիրն հետազոտվել է Յ. Յյուրխեթի, Դ. Ռասթունյի, Ֆ. Ահմադի, Գ. Յեշկեյի, Ռ. Ռոբինսոնի ուսումնասիրություններում¹¹: Նույն Ռ.

⁹ Avcioglu D. Türkiye'nin Düzeni. Dün - Bugün - Yarın. k. 2, İstanbul, 1976; Tunaya T.Z. Türkiye'de Siyasi Partiler. 1859-1952. İstanbul, 1952; Tunçay M. Türkiye Cumhuriyetinde Tek Parti Yönetiminin Kurulması (1923-1931). Ankara, 1981; Turan Ş. Türk Devrim Tarihi. kitap 1-2, Ankara, 1991-1992;

¹⁰ Berkes N. Türkiye'de Çağdaşlaşma. Ankara, 1973; Berkes N. The Development of Secularism in Turkey. Montreal, 1964; Keyder Ç. State and Class in Turkey. London-New-York, 1987; Inalcık H. Türkiye'nin modernleşmesi. "Belleten", c.LII, N 204, Kasım 1988, ss. 985-992; Mehmet Ö. Turkey in Crisis: some contradictions in the Kemalist development strategy. "International Journal of Middle East Studies", vol. 15, N 1, February 1983, pp. 47-66; Okyar O. Development Background of the Turkish Economy 1923-1973. "International Journal of Middle East Studies", vol. 10, N 3, August 1979, pp. 325-332; Toprak B. Islam and Political Development in Turkey. Leiden, 1981; Karpat K. Turkey's Politics. The Transition to a Multi-party System. Princeton, 1959;

¹¹ Jäschke G. Die Gründung der Türkischen Republik. "Belleten", c. XXXVII, N 148, October 1973, ss. 458-482; Jäschke G. Auf dem Wege zur türkischen Republik. "Die Welt des Islams", N 5, 1958, SS. 12-25; Ahmad F. The Making of Modern Turkey. London, 1992; Robinson R.D. The First Turkish Republic. Cambridge, Mass., 1965; Robinson R.D. The Lesson of Turkey. "The Middle East Journal", N 3, Autumn 1951, pp. 8-23; Rustow D. A. The Development of Parties in Turkey. in La Palombara J. and Weiker M. (ed.). Political Parties and Political Development. Princeton, 1966; Zürcher E.J. The Unionist Factor. The role of the Committee of Union and Progress in the Turkish national movement 1905-1926. Leiden, 1984.

Ռոբինսոնը, Դ. Լերները, Դ. Ռասթուն անդրադարձել են թուրքական բանակի դերին քաղաքական կյանքում,¹² իսկ Հ. Արմստրոնգի, լորդ Կինրոսի, Ռ. Բրոքի աշխատությունները նվիրված են Քեմալ Աբաթյուրքի անձին և գործունեությանը¹³, ընդ որում, այնտեղ տրվող գնահատականները՝ անկախ Աբաթյուրքի հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքից, պարունակում են հեղինակների բացահայտ սուբյեկտիվ մոտեցումներ: Հարկ ենք համարում առանձնացնել նաև Թուրքիայի, ընդհանրապես զարգացող երկրների քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացների բավականին խոր վերլուծություն պարունակող այնպիսի աշխատություններ, ինչպես, օրինակ, թուրքագետներ Ֆ. Ֆրեյի աշխատությունը թուրքական քաղաքական ընտրանու և Բ. Լյուիսի հետազոտությունները ժամանակակից Թուրքիայի ստեղծման և զարգացման մասին, հայտնի պատմաբաններ և հասարակագետներ Շ. Այգենշտադտի, Ա. Թոյնբրի, Ս. Հանթինգտոնի ուսումնասիրությունները քաղաքական արդիականացման խնդիրների և, մասնավորապես, Թուրքիայում նրա իրականացման վերաբերյալ¹⁴:

Աղբյուրների և գիտական գրականության հետ միասին ատենախոսության մեջ օգտագործվել է թուրքական, խորհրդային, արևմտյան պարբերական մամուլը, որն այս կամ այն կերպով անդրադառնում է տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են ծառայել Թուրքիայի Հանրապետության ստեղծման և կայացման ժամանակաշրջանի և խնդիրների հետ կապված բազմաթիվ հարցադրումների և կարծիքների քննական մեկնությունը, փաստերի համեմատական-համադրական վերլուծությունը և նորովի մեկնաբանումը: Բացի այդ, ատենախոսությունը շարադրելիս ընտրվել է

¹² Lerner D. and Robinson R. Swords and Ploughshares. The Turkish Army as a Modernizing Force. "World Politics", vol. XIII, N 1, October 1960, pp. 19-45; Rustow D.A. The Army and the Founding of the Turkish Republic. "World Politics", vol. XI, N 4, July 1959, pp. 513-552;

¹³ Armstrong H.C. Grey Wolf. Mustafa Kemal. London, 1933; Kinross, Lord. Atatürk; Brock R. Ghost on Horseback. The Incredible Atatürk. New-York, 1954;

¹⁴ Frey F.W. The Turkish Political Elite. Cambridge, 1965; Eisenstadt S. Modernization and Conditions of Sustained Growth. "World Politics", vol. XVI, N 4, April 1964, pp. 58-74; Eisenstadt S. (ed.). Readings in Social Evolution and Development. London, 1970; Huntington S. Political Order in Changing Societies. New-Haven-London, 1968; Lerner D. The Passing of Traditional Society. Glencoe, 1966; Lewis B. The Emergence of Modern Turkey. London, 1961;

ֆունկցիոնալ-կառուցվածքային մոտեցումը, որը դիտում է քաղաքական համակարգը որպես փոխկապակցված տարրերով ամբողջական համակարգ: Օգտագործվել են նաև պատմագրության և քաղաքագիտության մեջ ընդունված քաղաքական համակարգերի տիպաբանական բաժանման և քաղաքական արդիականացման կոնցեպցիաները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մույն ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտակար լինել Թուրքիայի և Մերձավոր Արևելքում քաղաքական գործընթացների, տվյալ ժամանակաշրջանի քաղաքական պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության գործում, ինչպես նաև քաղաքագիտական հետազոտություններով զբաղվող մասնագետների համար: Ատենախոսության արդյունքներից կարելի է օգտվել նաև Թուրքիայի նորագույն պատմության դասախոսությունների պատրաստման համար:

Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության գնահատման և ճշգրտման գործում, ինչպես նաև Թուրքիայի նկատմամբ իրենց քաղաքականության որոշման մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող ատենախոսությունը ամբողջությամբ քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի գիտական հոդվածներում և թեզերում, որոնք ներկայացված են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտում տեղի ունեցած գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում (Երիտասարդ արևելագետների հանրապետական 20-րդ և 21-րդ գիտական նստաշրջաններ՝ Երևան, 1999-2000 թթ., «Հասարակական գիտությունները XXI դարի շեմին» միջբուհական գիտաժողով՝ Երևան, 2000թ.), «Իրան-Նամե» գիտական ամսագրում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի 19-րդ հատորում: Հրատարակված հոդվածների և թեզերի ցանկը ներկայացվում է սեղմագրի վերջում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար ունի իր ենթաբաժինները), վերջաբանից, ծանոթագրություններից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է աշխատանքի արդիականության, նպատակների և խնդիրների մասին, սահմանվում են ուսումնասիրության նպատակն ու հիմնական խնդիրները, ներկայացվում է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգի ձևավորումը և տարրերը» անդրադառնում է Թուրքիայի քաղաքական համակարգին առնչվող էական պրոբլեմներին՝ նրա առաջացման պատմական պայմաններին, սահմանադրական կարգին, հիմնական պետական ինստիտուտների, քաղաքական կուսակցությունների, բանակի դերին ու գործոնին երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև գաղափարախոսության ոլորտին:

Գլխի առաջին ենթաբաժնում քննարկվում են քեմալական շարժման և Թուրքիայի Հանրապետության քաղաքականության ու գաղափարախոսության ժառանգական կապը նախորդ երիտթուրական ժամանակաշրջանի հետ, երբ նախադրյալներ ստեղծվեցին քեմալիզմի՝ որպես քաղաքական համակարգի և հոսանքի ձևավորման համար: Պատմական փաստերը վկայում են, որ 1919-1922 թթ. ազգայնական շարժման և 1923 թ.-ին հռչակված Թուրքիայի Հանրապետության համար հողը նախապատրաստվել է հենց երիտթուրքական շրջանում, որի ազդեցությունը բավականին ուժեղ էր, ինչի ապացույց է հանդիսանում այն, որ մինչև 1960-ական թթ. երկիրը ղեկավարել են երիտթուրքական կուսակցության հետ կապված գործիչներ: Թուրքական հասարակությունը և հատկապես զինվորական երիտասարդությունը հավատարիմ էին մնացել այն գաղափարներին, որոնք առաջ էին քաշվել երիտթուրքերի կողմից, մասնավորապես՝ մոլի ազգայնականության գաղափարին: Երիտթուրքական ժամանակաշրջանից հանրապետական Թուրքիան նաև ժառանգել է կենտրոնացված միակուսակցական իշխանական համակարգի մոդելը:

Այնուհետև, երկրորդ ենթաբաժինն անդրադառնում է քեմալական հանրապետության գլխավոր պետական ինստիտուտների՝ Թուրքիայի Մեծ Ազգային Ժողովի (ՄԱԺ), Հանրապետության նախագահի և կառավարության, ընտրական համակարգի դերին ու նշանակությանը երկրի քաղաքական կյանքում: Հանրապետության առաջին Սահմանադրությունը ազդանշում էր քեմալական շարժման ու նոր թուրքական ազգային պետության հիմքերի կառուցման փուլի ավարտը և հաստատում էր թուրքական պետության նոր իշխանական ինստիտուտները: Սահմանադրության մեջ իրենց արտահայտությունը գտան քեմալական պետական հայեցակարգի հիմնական դրույթները՝ ազգի գերիշխանությունը և իշխանությունների միասնականությունը. քեմալականները մերժեցին արևմտյան հասարակություններում կիրառվող իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ համարելով, որ այն չի համապատասխանում Թուրքիայի պայմաններին: Թուրքիայում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը կենտրոնացված էր մեկ մարմնում՝ Մեծ Ազգային Ժողովում, ինչը հնարավորություն էր տալիս ավտորիտար կամ ամբողջատիրական վարչակարգի ձևավորման համար:

Հանրապետության պետական ինստիտուտների դերն ու նշանակությունն էականորեն պայմանավորված էին միակուսակցական համակարգի գործոնով, ինչը գործնականում զրկում էր Թուրքիայի ՄԱԺ-ին Սահմանադրությամբ իրեն վերապահված իշխանությունից: Խորհրդարանը, ձևականորեն գործադիր մարմինները կազմավորող ու վերահսկող պետության գերագույն իշխանություն լինելով, իրականում ենթակա էր երկրի ղեկավարի ու նրա շրջապատի կամքին: Սահմանադրությամբ նախագահին տրված էին ոչ լայն լիազորություններ, սակայն 1920-ն թթ.-ից մինչև 1950թ. ամբողջ պետական ու կուսակցական իշխանությունը երկրում կենտրոնացված էր նախագահի ձեռքում և փաստորեն Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Զեմալ Աթաթյուրքի և երկրորդ նախագահ Իսմեթ Ինյունյուլի կառավարման ժամանակաշրջանները հանդիսանում էին պրեզիդենտական հանրապետության շրջան:

Երրորդ ենթաբաժնում հետազոտվում են հանրապետական Թուրքիայի առաջին քաղաքական կուսակցությունների ստեղծման և փոխհարաբերությունների հետ կապված խնդիրները, միակուսակցական համակարգի ձևավորման ընթացքը, պետության ու կուսակցության սերտաճման և «կուսակցապետության» ստեղծման հիմնահարցերը:

Զսանյոթ տարի անընդմեջ Թուրքիայում իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցության ձևավորման ընթացքը բաժանվում էր հետևյալ փուլերի. ա) կուսակցական կառույցների ու ապարատի կազմավորումը, բ) պետական և կուսակցական իշխանության կենտրոնացումը, գ) գաղափարախոսության մշակումը, դ) կուսակցության գերակայության հաստատումը պետական քաղաքականության մեջ և միակուսակցական վարչակարգի խստացումը:

ՀԺԿ-ն ոչ միայն կոչված էր կատարելու իշխանության նվաճման ու պահպանման գործիքի դերը, այլ նաև լինելու վերևից հասարակության նկատմամբ վերահսկողությունն իրականացնող մի մեխանիզմ, իշխանության կառույցներում անհրաժեշտ միասնությունն ու համախմբվածությունն ապահովող, քարծրագույն ղեկավարության որոշումներն իրագործող կազմակերպություն: Սակայն նման կուսակցական մոդելը հանդիպեց զգալի դիմադրության: 1924թ.-ին կազմավորվում է Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին ընդդիմադիր կուսակցությունը՝ Առաջադիմական-Հանրապետական կուսակցությունը, որի ստեղծման մեջ որոշակի դեր կատարեցին ազգայնական շարժման ղեկավարների անձնական հակադրությունները, ինչպես նաև պետության և քաղաքական համակարգի զարգացման ուղիների շուրջ տարաձայնությունների գործոնը: Առաջադիմականները հակված էին դեպի սահմանադրական միապետության և ուժեղ խորհրդարանական համակարգի հաստատման, կուսակցությունների միջև քաղաքական իշխանության ավելի մեծ բաշխման և ընդդիմադիր կուսակցության միջոցով մեկ անհատի ձեռքերում պետական իշխանության կենտրոնացման դեմ հակակշիռ ձևավորելու գաղափարները: Մինչդեռ, իշխող կուսակցությունը պատրաստ չէր ընդդիմության հետ զոյակցմանը և պայքարին: Արդյունքում, 1925թ. քրդական ապստամբությունը որպես պատրվակ օգտագործելով, Մուստաֆա Զեմալը արգելեց ԱՀԿ-ի գործունեությունը: Դրան հետևեցին 1926թ. Իզմիրի դավադրությունը և ընդդիմադիր գործիչների դատավարություններն ու մահապատիժները, որոնք օգտագործվեցին Մուստաֆա Զեմալի և ՀԺԿ-ի իշխանությանը մարտահրավեր նետելու ունակ թուրքական ազգայնական շարժման ներսում բոլոր մրցակից խմբերի վերացման նպատակով: Դրանք, անշուշտ, կրում էին քաղաքական հետապնդումների բնույթ, որի փիրսին էին հանդիսանում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի մնացորդները և Առաջադիմական կուսակցությունը: Իշխող վարչակարգի բոլոր մրցակից խմբերը վերացվեցին և

երկրում միակուսակցական քաղաքական համակարգի ձևավորումը ավարտին հասցվեց: 1930թ.-ին Հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալը փորձ կատարեց հաստատել երկրում այսպես կոչված «խնամակալ ժողովրդավարության» վարչակարգ՝ թույլատրելով ընդդիմադիր Լիբերալ-Հանրապետական կուսակցության ստեղծումը: Մակայն բնակչության դժգոհությունը իշխող կուսակցության վարվող քաղաքականությունից, որի արդյունքն էին ծանր տնտեսական վիճակն ու իշխանությունների չարաշահումները, Քեմալի համար անսպասելիորեն դարձրեց ԼՀԿ-ն բողոքի, նույնիսկ դիմադրության հնարավոր կենտրոն, և նա նախընտրեց չդիմել ավելորդ ուսկի՝ ցրելով ԼՀԿ-ն:

Միակուսակցական համակարգը, որպես կանոն, բնորոշ է այնպիսի հասարակություններին, որտեղ բացակայում են հասուն հասարակական կառուցվածքը, զարգացած տնտեսությունը, բնակչության քաղաքական կուլտուրայի ավանդույթները: 1920-1930-ական թթ. Թուրքիան հենց այսպիսի մի երկիր էր և այս պայմաններում էլ ստեղծվեց ուժեղ կուսակցություն, որն իր ձեռքբերում կենտրոնացրեց և՛ քաղաքական ղեկավարման, և՛ վարչական ու տնտեսական կառավարման գործառույթները: Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը, մնալով երկրում միակ գործող ու օրինական քաղաքական կազմակերպություն, դառնում է փաստորեն բռնապետական տիպի կազմակերպություն, որը պահանջում էր բնակչության անվերապահ աջակցությունն ու հնազանդությունը և ի մի էր բերել տարբեր խմբերի ու խավերի շահերը: Դասական իմաստով ՀԺԿ-ն նույնիսկ քաղաքական կուսակցություն չէր, այլ «կուսակցապետություն», որը դարձավ քեմալական քաղաքական համակարգի ամբողջ գործունեության ողնաշարը: Քաղաքական կյանքում ՀԺԿ-ի բացարձակ մենատիրությունը օրինաչափորեն հանգեցրեց կուսակցական ու պետական ապարատների սերտաճմանը: Այստեղ առկա է անմիջական կապ. ՀԺԿ-ի քաղաքական մենիշխանությունը հնարավոր չէր լինի պահպանել, եթե պետությունը չդառնար կուսակցության մենատիրությամբ: Որպես այդ տարիների պետական քաղաքականության լավագույն ձևակերպում կարելի է մեջբերել «մեկ կուսակցություն, մեկ ազգ, մեկ առաջնորդ» կարգախոսը:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. Թուրքիայի քաղաքական կուսակցությունների հետ կապված գործնաբացների արդյունքում երկրի քաղաքական համակարգը ձեռք բերեց ավտորիտար-ամբողջատիրական համակարգերին հատուկ գծեր. (1) միակուսակցական համակարգի հաստատում,

(2) իշխող կուսակցության սերտաճումը պետական ապարատի հետ, (3) ամբողջ հասարակական կյանքի միասնականացումը, (4) մտածողության ավտորիտար եղանակը և ազգային առաջնորդի պաշտամունքը:

Խոսելով թուրքական քաղաքական համակարգի մասին՝ չի կարելի չանդրադառնալ նաև թուրքական բանակի գործոնին, որի ուսումնասիրությանը նվիրված է առաջին գլխի չորրորդ ենթաբաժինը: Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում երկրի քաղաքական կյանքի գլխավոր դերակատարներից մեկը մշտապես հանդիսացել է բանակը: Ձիմվորականների աջակցությունը վճռորոշ էր հանդիսանում քաղաքական իշխանության խնդրի լուծման հարցում: Հանրապետության գրեթե բոլոր ղեկավարները պատկանում էին բանակի հրամանատարական կազմին: Անվիճելի է, որ Թուրքիայի Հանրապետությունը ստեղծվել է զինվորականության կամքով ու ջանքերով և առաջնորդվում է նրա կողմից: 1920-1930-ական թթ.-ին թուրքիական քաղաքական համակարգին հատուկ էր այն միտումը, որ բանակն, անմիջականորեն չմասնակցելով երկրի կառավարմանը, երկրի ընտրամու մեջ մեծ տուկոս կազմող զինվորականների միջնորդավորվածությամբ ապահովում էր իր վերահսկողությունը քաղաքական կյանքի վրա:

Քեմալ Աթաթյուրքը գիտակցում էր, որ նրա իշխանությունը վերջիվերջո կախված է զինվորականության նկատմամբ իր վերահսկողությունը պահպանելու հանգամանքից, ուստի, նա միշտ զգոն էր բանակում կատարվող յուրաքանչյուր հուզումների հանդեպ: Հետևաբար, բանակի հետ կապված նախագահի հիմնական հոգսը եղել է, ըստ էության, ոչ թե այն քաղաքականությունից դուրս պահել, այլ ապահովել նրա հավատարմությունն իր անձին, քաղաքական գծին ու ժառանգությանը: Քեմալ Աթաթյուրքի իշխանության տարիները միայն ամրապնդեցին բանակի դերը Հանրապետության քաղաքական կյանքում, իսկ նրանից հետո բանակը դարձավ երկրում լավագույնս կազմակերպված պետական և քաղաքական ինստիտուտը, Հանրապետության պետական և քաղաքական համակարգի «առանցքը», որն իր վրա վերցրեց Թուրքիայի առաջին նախագահի ժառանգության պահպանման երաշխավորի և Հանրապետության քեմալիստական ուղու պահպանման առաքելությունը՝ իր ուժը մշտապես զգացնել տալով երկրում քաղաքական ճգնաժամների առաջացման պահերին և իր ձեռքում պահելով Թուրքիայի քաղաքական կյանքի վրա ազդեցության ու վերահսկողության լծակները:

Գլխի հինգերորդ մասում քննարկվում են քեմալիզմի՝ որպես պետական կամ պաշտոնական գաղափարախոսության դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Քեմալիզմը հանդես չեկավ որպես կապակցված, համապարփակ գաղափարախոսություն, բայց տվյալ ժամանակաշրջանում բուրքական պետությունը զգում էր որոշակի դոկտրինաների կարիք, քանի որ ՀԺԿ-ն ու բանակը դեռևս բավարար չէին իսլամի ազդեցության դեմ հակաշիռ լինելու առումով: Որպես քեմալիզմի հենասյուն հռչակվում էին Հայրենիքը, Հանրապետությունը, Ազգը և վեց «նետերը»՝ հանրապետականությունը, ազգայնականությունը, ժողովրդայնությունը, էտատիզմը, լաիցիզմը և հեղափոխականությունը, որոնց համառոտ վերլուծությունը ներկայացվում է տվյալ ենթաբաժնում: Այդ վերլուծությունը թույլ է տալիս բնութագրել քեմալիզմը որպես արևմտականացման և բարեփոխումների գաղափարախոսություն և միաժամանակ՝ որպես Թուրքիայի զարգացման «հատուկ» ուղի կամ ռազմավարություն, որն ուղղված է իսլամական երկիրը ժամանակակից արևմտյան տիպի աշխարհիկ պետություն դարձնելուն: Քեմալիզմը նաև հետևողականորեն արմատավորում էր թուրքական քաղաքական գիտակցության մեջ ազգայնականության և էտատիզմի գաղափարները, որոնք կոչված էին ապահովելու թուրքական պետության էթնիկական միատարրությունն, ազգային փոքրամասնությունների շարունակական ճնշումը և երկրի հասարակական-քաղաքական կյանքում պետության անվիճելի գերակայությունը:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Քաղաքական ղեկավարությունը Թուրքիայի քաղաքական համակարգում (1920-1930-ական թթ.)» նվիրված է Թուրքիայի Հանրապետությունում քաղաքական լիդերության պրոբլեմների ուսումնասիրությանը, որտեղ փորձ է արվում դիտարկել քաղաքական ղեկավարության և քաղաքական ընտրանու երևույթները Թուրքիայի քաղաքական համակարգի կտրվածքով:

Գլխի առաջին ենթաբաժնում վերլուծության են ենթարկվում Թուրքիայում քաղաքական լիդերության տեսակները: Թուրքիայի Հանրապետության քաղաքական համակարգը իր գոյության առաջին տարիներին խարխսվում էր ոչ թե գաղափարական և իմստիտուցիոնալ հիմքերի, այլ երկրի ղեկավարների, հատկապես՝ նրա առաջին նախագահ Քեմալ Աթաթյուրքի անհատական քարիզմայի վրա: Եթե օսմանյան շրջանում գերիշխում էր քաղաքական ղեկավարության ավանդական տեսակը՝ ի դեմս Օսմանների գրեթե 600-ամյա իշխանության, ապա Օսմանյան կայսրության փլուզումը, քնականաբար,

հանգեցրեց նաև քաղաքական ղեկավարության ավանդական տեսակի վերացմանը և քարիզմատիկ առաջնորդի առաջ քաշմանը: Ընդհանրապես, 1920-1940-ական թթ. Թուրքիայում պետության և կուսակցության առաջնորդն ուներ չափազանց ուժեղ իշխանական և բարոյական ազդեցություն հասարակությունում՝ հանդես գալով որպես առանձնահատուկ առաքելության կրող, այսինքն, որպես քարիզմատիկ լիդեր:

Երկրորդ ենթաբաժնում ուսումնասիրվում է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի դերը երկրի քաղաքական համակարգում: Նա 1919 թ.-ից սկսած հանդիսանում է Թուրքիայի ժամանակակից պատմության կենտրոնական դեմքը, որի ջանքերով ստեղծվեց նոր թուրքական ազգային պետությունը: Նրա անվամբ կոչվեցին քաղաքական դոկտրինա և քաղաքական կուրս, որոնք որոշիչ էին այս երկրի քաղաքականության համար:

Աթաթյուրքի իշխանությունը, թերևս, կարելի է բնորոշել որպես բռնապետական. նա միաժամանակ հանդիսանում էր Հանրապետության ցմահ նախագահ, գործադիր իշխանության ղեկավար, իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցության անփոփոխ գլխավոր նախագահ, Ձինված Ուժերի զերագույն հրամանատար: Հաղթելով իշխանության համար պայքարում՝ Մուստաֆա Քեմալը դարձրեց իշխանական կառուցվածքը ուղղահայաց և փորձեց համակարգել ու համախմբել քաղաքական համակարգի բոլոր տարրերը: Այդ քաղաքականությունը հիմնավորվում էր որոշակի առաջնահերթ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպես, օրինակ, երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, արդիական հասարակության կազմավորումը, զարգացող տնտեսության ստեղծումը, ժամանակակից բանակի շինարարությունը և այլն:

Ենթաբաժնում քննարկվում են Աթաթյուրքի քաղաքական ղեկավարման ռազմավարությունը, մարտավարությունը և ոճը, նրա քաղաքական մտածելակերպը, ինչի հիման վրա Աթաթյուրքի ղեկավարումը կարելի է բնութագրել որպես «հայրապետական» և «ավտորիտար»:

Սույն գլխի երրորդ ենթաբաժինը նվիրված է Թուրքիայի քաղաքական ընտրանու հիմնախնդրին: 1920-1930-ական թթ. ժամանակաշրջանում քաղաքական ընտրանին բաղկացած էր զինվորականներից, հատկապես բարձրագույն սպայակազմի ներկայացուցիչներից, քաղաքաբնակ մտավորական խավից, բյուրոկրատիայից, Անատոլիայի տեղական վերնախավի ներկայացուցիչներից և

նոր ձևավորվող արդյունաբերական և առևտրական կամ «միջին» խավից: Թուրքական քաղաքական ընտրանին հանդիսանում էր երկրի կան համակարգի կայացման և գործունեության ամուր հիմքը, որը մասնակցում էր քաղաքական ծրագրերի և բարեփոխումների մշակման և կենսագործման մեջ:

Քեմալական ընտրանու պատկերացումները քաղաքական համակարգի մասին մնում էին ավանդական, մասնավորապես, այն, օսմանյան վերնախավի պես, ճանաչում էր պետության գերակայող դերը հասարակական-քաղաքական կյանքում: Հատկանշական է, որ արդիականացվող վերնախավի և ժողովրդի միջև գոյություն ունեւ խոր ճեղքվածք, որն արտահայտվում էր ինչպես սոցիալական ծագման և դիրքի, այնպես էլ կրթական և մտավոր մակարդակներում: Հանրապետական ընտրանին չկարողացավ շահել բնակչության լայն խավերի լիարժեք աջակցությունը՝ մնալով որպես զանգվածներից կտրված վերնախավ:

Երկրորդ գլխի չորրորդ ենթաբաժինը նվիրված է քաղաքական առաջնորդի և քաղաքական ընտրանու միջև փոխհարաբերություններին, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման հարցերին:

Աթաթյուրքն իր առջև խնդիր էր դրել նախ և առաջ ստեղծել ազդեցիկ արևմտականացված վերնախավ, իսկ արդեն այդ խնդրին էին ստորադասվում զանգվածների ակտիվ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքում (ժողովրդավարացումը) և նրանց տնտեսական վիճակի բարելավումը:

Թուրք քաղաքական ղեկավարները ձգտում էին քացարձակ վերահսկողություն սահմանել երկրի քաղաքական համակարգի և, մասնավորապես, քաղաքական ղեկավարման գործընթացների նկատմամբ, այստեղից էլ բխում էր նրանց ձգտումը մեջլիսի, կառավարության և կուսակցության միջոցով կենտրոնացնել իշխանությունը իրենց ձեռքերում:

Ատեմախոսության ԵՐԲՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Քաղաքական արդիականացումը Թուրքիայի Հանրապետությունում (1920-1930-ական թթ.)», քննարկում է Թուրքիայի Հանրապետությունում 1920-1930-ական թթ.-ին ընթացող քաղաքական արդիականացման պրոբլեմը: Քեմալական Թուրքիան որպես իր զարգացման հիմք ընտրեց արդիականացման (մոդեռնիզացիայի) ուղին: Այդ ընտրությունը պայմանավորված էր զուտ պրագմատիկ շահերով. եթե Թուրքիան ցանկանում էր պահպանել իր նվաճումները և Արևմուտքի հետ հավասարի պես գործ ունենալ, ապա նրան անհրաժեշտ էր յուրացնել արևմտյան քաղաքակրթությունը: Երկրի հասարակական և քաղաքական արդիականացման հիմնահարցը բառացիորեն

հանդիսանում էր նրա համար գոյության խնդիր: Արդիականացման ընթացքում թուրք ժողովուրդն ապրեց իր ավանդական արժեքների փոխակերպումը, քաղաքական իշխանության հիմքերի փոփոխությունը, անցում կրոնական-համայնքային կենսակերպից դեպի աշխարհիկ-ազգայնական, և կատարվեց նոր քաղաքական ինստիտուտների հաստատումն ու ազգային ինքնության հստակեցումը:

Գլխի առաջին ենթաբաժնում նեկայացվում է արդիականացման վերաբերյալ առկա հիմնական տեսությունների համառոտ վերլուծությունը, որը թույլ է տալիս անել այն դատողությունը, որ քաղաքական արդիականացումը ներառում է իր մեջ նախաարդիական-ավանդական տիպի պետությունից դեպի հետավանդական-արդիական պետություն տրանսֆորմացիայի հասկացությունը, ինչի օրինակ մերձավորարևելյան տարածաշրջանում հաճախ ծառայում է քեմալական Թուրքիան:

Նրա քաղաքական համակարգը 1920թ.-ից սկսած գտնվում էր անընդհատ արդիականացման պրոցեսում՝ ձեռք բերելով ամբողջ Ասիայում առավել զարգացած համակարգերից մեկի բնույթ:

Երկրորդ ենթաբաժնում ուսումնասիրվում է քաղաքական արդիականացման ընթացքը Թուրքիայի Հանրապետությունում 1920-1930-ական թթ.-ին: Ազգայնական շարժման հաղթանակից հետո հաջորդ քայլը տրամաբանորեն դառնալու էր նոր քաղաքական և իշխանական ինստիտուտների կազմավորումը, ինչը պայմանավորեց արմատական սահմանադրական փոփոխությունները 1922-1924 թթ. ընթացքում, այն է՝ սուլթանությունը և խալիֆայությունը փոխարինվեցին Հանրապետությամբ, Մեծ Ազգային Ժողովի և նրա կողմից ընտրվող նախագահի և կառավարության իշխանությամբ:

Արդիականացման գործընթացը հնարավոր չէ նախաձեռնել ու հաջողությամբ իրագործել առանց նրա համար պատասխանատվություն կրող ղեկավարության: Այսպիսի ղեկավարություն, որը բեկադրում էր իր կամքը հասարակությանը, 1920-1930-ական թթ. Թուրքիայում գոյություն ուներ: Սակայն, մյուս կողմից, թուրքական ղեկավարությունը չունեւ արդիականացման որևէ ամբողջական և համակարգված ծրագիր, և այն սահմանափակվում էր թուրքական ազգային պետությունը կայացնելու, այն հաստատուն դարձնելու և հզորացնելու ընդհանուր նպատակով:

Թուրքական քաղաքական արդիականացումը աչքի էր ընկնում քաղաքական ինստիտուտների նկատմամբ անհատների գերիշխող դիրքով, իշխանության կենտրոնացմամբ, իշխանության ճյուղերի միասնությամբ, պետությունից քաղաքացու բացարձակ կախվածությամբ: Ժողովրդավարության տարր էր, անշուշտ, ժողովրդին Սահմանադրության մեջ իբրև իշխանության աղբյուր հռչակելը: Սակայն ժողովուրդը անմիջականորեն չէր մասնակցում այդ իշխանության ձևավորման գործին և չէր ազդում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա: Բացակայում էր նաև քաղաքական բազմակարծությունը, քաղաքական ազատություններն ու իրավունքները պաշտպանված չէին և կրում էին դեկլարատիվ բնույթ: Ամբողջ քաղաքական գործունեությունը դարձել էր բացառապես իշխող ուժի գործառույթը: Դրա հետևանքով ստեղծվեց միակուսակցական «խնամակալ» քաղաքական համակարգ, որը կոչված էր առաջնորդել և կերտել արդիական հասարակությունը: Սակայն այդ ճանապարհին առկա էին նաև լուրջ խոչընդոտներ: Այսպես, քրդական ապստամբությունը հանդիսացավ ամենալուրջ մարտահրավերը նոր Թուրքիայի համար 1920-ական թթ. ընթացքում՝ ցույց տալով իշխող վերնախավին, որ չնայած հայերի և հույների գտնված քաղաքականությանը, երկրում այդպես էլ չհաստատվեց էթնիկական միատարրություն: Քրդական ապստամբությունը նաև հարմար առիթ ծառայեց Հանրապետության ղեկավարության համար երկրում ավտորիտար վարչակարգ հաստատելու առումով: Բազմակուսակցականության հաստատման երկու փորձն էլ 1924-1925 և 1930 թթ.-ին չբերեցին պլուրալիստական քաղաքական համակարգի ստեղծմանը, այլ հանգեցրեցին միայն միակուսակցական համակարգի հաստատմանը կամ ուժեղացմանը: Այնուհանդերձ, որ արդիական քաղաքական ինստիտուտները՝ կուսակցությունները և ընդհանրապես բազմակուսակցական համակարգը Թուրքիայի մեծ երկրներում կարող էին ստեղծվել միայն պետական իշխանությունների և ղեկավարների կամքով և որոշմամբ:

Քաղաքական արդիականացման գործընթացը Քեմալ Աթաթյուրքի իշխանության շրջանում կարելի է բաժանել երկու փուլերի: Եթե 1920-ական թթ.-ին թուրք քաղաքական լիդերների քաղաքականությունն ուղղված էր քաղաքական ոլորտում և ընդհանրապես հասարակական կայքում փոփոխությունների իրականացման նպատակին, ապա 1930-ական թթ.-ին նրանք կողմնորոշվում էին դեպի եղածի պահպանումը: Այդ տարիները բնորոշվում են միակուսակցական վարչակարգի խստացման ու աշխարհիկ-ազգայնական գաղափարախոսության

ամրապնդմանն ուղղված միջոցառումների ընթացքի ինտենսիվացմամբ, ինչպես, օրինակ, ՀԺԿ-ի քարոզչական կենտրոնների՝ «Ժողովրդական տների» ստեղծումը, մամուլի նկատմամբ խիստ գրաքննությունը, Ստամբուլի համալսարանից ինքնուրույն մտածող դասախոսների հեռացումը, հասարակական և քաղաքական ընկերությունների ստեղծումը սահմանափակող օրենքը:

Արդիականացման տեսության մեջ առաջնային տեղ է հատկացվում քաղաքականության և կրոնի փոխհարաբերությունների խնդրին, որի ուսումնասիրությանը նվիրված է գլխի երրորդ մասը: Քաղաքական արդիականացման կուրսը Թուրքիայում բախվել էր կրոնական ավանդույթների հետ: Քեմալ Աթաթյուրքը հետևողականորեն վերացնում էր իսլամի քաղաքական և հասարակական ինստիտուտները՝ հակադրելով իսլամի համապարփակ ուսմունքին ազգային պետականության գաղափարը և ջանալով իր բարեփոխումների միջոցով դուրս բերել Թուրքիան մահմեդական պետական գաղափարախոսության ազդեցության ոլորտից: Մինչդեռ հասարակական գիտակցությունն այդ ժամանակ պատրաստ չէր աշխարհիկացման արագ ընթացքին, և այդ պատճառով էլ Աթաթյուրքին չհաջողվեց մեծ չափերով սասանել ժողովրդի գիտակցության մեջ արմատավորված իսլամի ազդեցությունը: Երկրի բնակչության մեծամասնության համար արդիականացման պտուղներն այդպես էլ անհասու մնացին, ինչի արդյունքում ճեղքվածք առնջացավ իշխող վերնախավի և զանգվածների միջև: Դրա արձագանքը դարձավ քաղաքական իսլամի վերածնունդը Թուրքիայի Երկրորդ և Երրորդ Հանրապետությունների օրոք:

Չորրորդ ենթաբաժնում ներկայացվում են քաղաքական արդիականացման հետևանքներն ու ազդեցությունը երկրի հետագա քաղաքական զարգացման վրա: Թուրքիայի փորձը ցույց տվեց, որ քաղաքական համակարգի ավտորիտար ձևը կարող է արդյունավետ լինել արդիականացման գործընթացի սկզբնական փուլերում: Թուրքիայում քաղաքական արդիականացումն, ըստ էության, ընթացավ երկու փուլով: Առաջին փուլում լուծվում էր հիմքերի ստեղծման հարցը, ընդ որում, շատ քաղաքական պրոբլեմներ, մասնավորապես, արդյունավետ և ինստիտուցիոնալ քաղաքական իշխանության ստեղծման պրոբլեմը, մնացին Աթաթյուրքի օրոք չլուծված, ուստի, չի կարելի խոսել ավտորիտար համակարգի պայմաններում արդիականացման լիակատար հաջողության մասին: Մինչդեռ հաջորդ փուլում, որը սկսվեց արդեն Աթաթյուրքի մահվանից և Երկրորդ աշխարհամարտից հետո, քեմալիստական քաղաքական համակարգը ունակ եղավ

խաղաղ ճանապարհով իրականացնել անցումը դեպի ավելի ազատական համակարգ՝ դրսևորելով իր ներսում վերակառուցման և նոր պայմաններին հարմարվելու ընդունակություն:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները՝ ատենախոսը եզրակացնում է, որ, ընդհանուր առմամբ, 1920-1930-ական թթ. թուրքական քաղաքական համակարգը կարելի է բնորոշել որպես՝ (1) «պրագմատիկ բռնապետություն» կամ արդիականացվող ավտորիտարիզմ, (2) սոցիալական միասնության գաղափարը որդեգրած, հասարակության մեջ դասակարգերի գոյությունը ժխտող, (3) ազգային միատարրության սկզբունքի վրա հենվող, այսինքն, երկրում բնակվող այլազգիներին ճնշող կամ հետապնդող, և (4) քարիզմատիկ առաջնորդի կողմից ղեկավարվող համակարգ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Թուրքիայի Հանրապետական-Ժողովրդական կուսակցության ձևավորման հարցի շուրջ. - Երիտասարդ արևելագետների հանրապետական 20-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1999, էջ 5-6
2. Պետական քաղաքականությունը և քաղաքական մտածելակերպը Թուրքիայում 1920-1930-ական թթ.-ին. - «Հասարակական գիտությունները XXI դարի շեմին» միջբուհական գիտաժողով, Ջեկուցումների թեզեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտ, 2000, էջ 21
3. Բանակի գործունը Թուրքիայի քաղաքական և հասարակական կայնքում (1920-1930-ական թթ.). - Երիտասարդ արևելագետների հանրապետական 21-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2000, էջ 6-7
4. Իսլամը և արդիականացումը (Թուրքիայի օրինակով). - «Իրան -Նամե», հատոր 35, 2000, էջ 55-57
5. Թուրքիայի քաղաքական ընտրանու ընդհանուր բնորոշ գծերը (1920-1930-ական թթ.). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. հատոր XIX, Երևան, 2000, էջ 21-27
6. К вопросу об особенностях политической модернизации в Турецкой Республике (1920-1930-е годы). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. հատոր XIX, Երևան, 2000, էջ 28-36

БАГДАСАРЯН СУРЕН КАМОЕВИЧ

ПОЛИТИЧЕСКАЯ СИСТЕМА ТУРЦИИ В 1920-1930-Х ГОДАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всеобщая история"

Защита состоится 15-го декабря 2000г. по адресу: 375019, г. Ереван, просп.

Маршала Баграмяна, 24г, в Институте востоковедения НАА РА

РЕЗЮМЕ

Представляемая работа посвящена изучению политической системы Турции в 1920-1930-х гг. Этот период современной турецкой истории оказал большое влияние на все политическое развитие Турецкой Республики, в особенности на процесс создания ее государственных и политических институтов. Данная тема исследования имеет важное политическое и практическое значение, поскольку корни многих современных тенденций в общественно-политической жизни Турции находятся именно в периоде 1920-1930-х гг. Интерес к данной теме обусловлен также тем обстоятельством, что в наши дни происходят сходные процессы становления национальных государств и построения современного общества.

Цель работы заключается в изучении особенностей политической системы Турции в 1920-1930-х гг. и ее целостной характеристики. Особенностью выбранной темы являлось то, что она дает историческую и политологическую оценку этапу политического развития Турецкой Республики, проходившему в исключительных исторических условиях после развала Османской империи.

Научная новизна работы состоит в том, что тема диссертации не являлась предметом специального исследования, хотя ее отдельные аспекты освещались как советскими и, в частности, армянскими учеными, так и турецкими и западными специалистами. Так, впервые системно и в целостности представлены такие проблемы, как однопартийная система и авторитарный режим власти основателя Турецкой Республики Кемаля Ататюрка, политическое лидерство в целом и ход модернизации современной Турции в период ее становления. Диссертация является попыткой ответить на вопросы, которые и сегодня остаются актуальными в Турции, как, например, восприятие и роль государства в политическом сознании турецкого общества, отношения государства и партии, государства и армии. Новизна работы заключается также в том, что турецкая политическая система в 1920-1930-х

гг. рассматривается в ракурсе теории тоталитарной, авторитарной и демократической политических систем.

Диссертация состоит из введения, трех глав с примечаниями, заключения и библиографии. В введении обосновывается актуальность и значение темы, приводится краткий обзор источников и литературы, на которых основана работа. В первой главе ("Формирование и элементы политической системы Турецкой Республики") представлены предшествовавший кемалистскому периоду турецкой истории младотурецкий период, когда фактически была подготовлена почва для нового турецкого национального государства; анализируются основные положения первой Конституции Республики, а также роль и значение главных государственных институтов - Великое Национальное Собрание, Президент и Правительство Республики; процесс формирования и взаимоотношений основных политических партий страны - Народно-Республиканской партии, Прогрессивно-Республиканской партии и Либерально-Республиканской партии, окончившийся установлением политической монополии НРП; фактор турецкой армии в политической жизни Турции, влиявший на развитие страны через руководство Республики, состоявшее в основном из военных; сфера кемалистской идеологии, имевшей статус официальной и определившей путь развития страны на долгие годы вперед.

Во второй главе ("Политическое лидерство в политической системе Турции") диссертант исследует проблемы политического лидерства в Турции, в частности, сущность и влияние харизматического типа лидерства на политические процессы; представлены деятельность, политический курс, политическое мышление первого президента Турецкой Республики Кемала Ататюрка, оказавшего огромное влияние на ход развития современной Турции. В главе анализируются также роль политической элиты, ее взаимоотношения с политическим руководителем страны, процесс принятия политических решений.

Третья глава ("Политическая модернизация в Турецкой Республике") посвящена проблемам модернизации турецкого общества в вышеуказанный период, в особенности - ее политическому аспекту. Из проведенного анализа можно заключить, что становление новых политических институтов, решение многих политических проблем Турции и построение в ней современного общества во многом обусловлено ролью государства и его руководителей, будучи очень трудным и долгим процессом, который и до сего дня еще далек от своего завершения.

В заключении автор подводит результаты работы и делает вывод, характеризующий политическую систему Турции в 1920-1930 гг. как "модернизирующийся авторитаризм" с однопартийной системой при монополии одной партии на власть, выражавшейся в создании "партийного государства", и управляемой харизматическим лидером.

Работа может представлять интерес для дальнейшего изучения новейшей истории Турции и политических исследований по странам Ближнего Востока, а также может быть использована при составлении лекционных курсов по новейшей истории Турции. Положения и выводы диссертации могут быть использованы при оценке внутренней и внешней политики Турции со стороны государственных органов Республики Армения, а также при определении ими своей политики в отношении Турции,

BAGHDASARYAN SUREN

THE POLITICAL SYSTEM OF THE TURKISH REPUBLIC IN 1920-1930s

SUMMARY

The work under consideration is devoted to investigation of the political system of Turkey in 1920-1930s. This period of the modern Turkish history exerted a great influence on the whole political development of the Turkish Republic. The theme of the investigation has the significant political and practical meaning, because in this period are rooted several main trends in Turkey's politics, as well as for the similar processes of the establishment of the national states and the modern societies take place in our days.

The purpose of the work is to study the peculiarities of Turkey's political system in 1920-1930s and its whole characteristics.

The scientific novelty of the work is that the theme of the dissertation was not before the object the special investigation, though its separate aspects were studied both by the Soviet and the Turkish and Western specialists. So, at first time, systematically and completely are presented such problems as the single-party system and the authoritarian power regime of the founder of the Turkish Republic Kemal Ataturk, the political decision-making in its complex and the process of the modernization of Turkey. In the dissertation discussed such actual for today's Turkey questions as a perception and role of state in the political life and the political consciousness of the Turkish society, the relationship between state and party, state and army.

The dissertation consists of preface, three chapters with foot-notes, conclusion and bibliography. In the preface the importance of the proposed theme is grounded, the sources and literature's survey is presented.

The chapter 1 ("The establishment and the elements of the political system of the Turkish Republic") presents the preceding to the Kemalist period of the Turkish history the Young Turks period, the main political events and processes in the establishment of Republic, the analysis of the first republican Constitution and the main republican institutions - the Grand National Assembly, President and Government; studied the process of the political parties and "state-party" system's forming as well as the factor of the Turkish army in the political life of Republic at the above-mentioned period; presented also the sphere of ideology.

In the chapter 2 ("The political leadership in the political system of Turkey") the dissertant investigates the problems of the political decision-making in Turkey, particularly, the essence and the influence of charismatic type of leadership; the activity, policy and principles of the first president of the Turkish Republic Kemal Ataturk, who had the great influence on the modern Turkey's development. In the chapter also is analysed the role of the political elite.

And the last chapter 3 ("The political modernization of the Turkish Republic") devoted to the problems of modernization of the Turkish society, especially to its political aspect. The establishment of the modern political institutions, the solution of many political problems in Turkey and the general problem of the creation of the modern society there depended and depends on the state and its leaders, being very difficult and long process.

In the conclusion are brought the results of the work and makes conclusion, that characterised the political system of Turkey in 1920-1930s as a "modernizing authoritarianism" with a single-party regime under the monopoly of one party to power, which expressed in the establishment of "state-party", and ruled by the charismatic leadership.

The work will be of interest for the specialists dealing with the investigation of the modern Turkish history and the political studies of the Middle East countries. The theses and the results of the dissertation may be explored by the state bodies of Republic of Armenia under the evaluation of Turkey's domestic and foreign policy.